



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

«11» հուլիսի 2018 թվականի N:167-Գ ք.Գյումրի

«ԱՂԻՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՋ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԿԱՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ  
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի դատախազի 2018 թվականի հունիսի 7-ի N:64/22-14-18 միջնորդագիրը.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար «Աղինի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարեն Վարդանյանին հայտարարել խիստ նկատողություն:

2. «Աղինի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարեն Վարդանյանին՝ 1-ամսյա ժամկետում ձեռնարկել համապատասխան միջոցառումներ արձանագրված խախտումների վերացնելու և դրանց նպաստող պայմանները այսուհետ բացառելու նպատակով:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Սոֆիա Հովսեփյանի վրա:

Կ.ՍԱՐՈՒԿԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

